



**Բարի գալուստ
Նորեկների
Երեխաների Խնամք
(Care for Newcomer
Children – CNC) ծրագիր**

**Բարի գալուստ մեր CNC
ծրագիր!**

**Կարևոր է ժամանակ
տրամադրել մեր ծրագրին և
անձնակազմին վարժվելու
համար, որպեսզի Ձեր
երեխան իրեն ապահով
զգա և Դուք կարողանաք
ուսանել հանգիստ մտքով:**

**Երբեմն երեխաները լաց
են լինում, իրենց քված են
զգում կամ շատ անսպասելի
են արձագանքում, երբ
ծնողները իրենց առաջին
անգամ մենակ են թողնում:
Բաժանման ընթացքում
տագնապի զգացումը
նորմալ է, հատկապես եթե
երեխան առաջին անգամ է
մասնակցում խնամակալին
խնամքի ծրագրին: Որպեսզի
օգնենք Ձեզ և Ձեր երեխային
հաղթահարել նախնական
բաժանումները,
մենք առաջարկում
ենք աստիճանական
բաժանման մեթոդը:**

Ի՞նչ է աստիճանական բաժանումը

Աստիճանական բաժանումը նշանակում է երկարացնել բաժանման ժամանակահատվածը ծնողի և երեխայի միջև երեխայի ծրագրին վարժվելու ընթացքում: Սա ներառում է աշխատանք ծրագրի աշխատակիցների հետ, որը կնախապատրաստի Ձեր երեխային առաջին բաժանումներին:

Աստիճանական բաժանումը՝

- հարգում է երեխաների կարիքները
- օգնում է Ձեր երեխային զգալ իրեն ապահով և անվտանգ
- ապահովում է դյուրին կերպով ծրագրին միանալն ու մասնակցելը
- հիմք է հանդիսանում հանգիստ բաժանումների և առողջ կապվածության համար Ձեր և երեխայի միջև նրա մեծանալու ընթացքում:

Այն երեխաները, որոնք ունեն առաջին բաժանման տրավմատիկ փորձ, ավելի երկար են ընտելանում ծրագրին, ուստի պետք է պատրաստ լինեք մնալ Ձեր երեխայի հետ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է: Յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ է, և ամենակարևորն է չաճապարել:

Ի՞նչպես է աշխատում ծրագիրը

Ծրագիրը սկսելուց առաջ

- Եթե հնարավոր է, փորձեք ներկա գտնվել դասերից մեկին Ձեր երեխայի հետ:
- Անմիջականորեն խոսեք աշխատակիցների հետ Ձեր երեխայի, ծրագրի մասին և ինչպես են նրանք սովորաբար պատրաստվում բաժանմանը: Սա կօգնի Ձեր երեխայի մոտ առաջացնել վստահություն և ապահովության զգացում աշխատակիցների նկատմամբ:
- Եթե հնարավոր է, ցույց տվեք Ձեր երեխային սենյակը:

Ձեր երեխայի ծրագրին մասնակցելու առաջին օրերը

- Փորձեք լինել ոգեշնչված և անկաշկանդ:
- Ընտրեք սենյակի այն հատվածը, որը Ձեր կարծիքով Ձեր երեխային ավելի դուր կգա և ցույց տվեք աշխատակիցներին, թե որ խաղալիքներով է նա սիրում խաղալ:
- Կենտրոնացեք Ձեր երեխայի վրա: Խոսեք նրա հետ, ցույց տվեք նրան խաղալիքները և խաղացեք միասին:
- Ուշադիր զննեք սենյակի մյուս հատվածները, որոնք նույնպես կարող են հետաքրքրել նրան և հետևեք նրա քայլերին:
- Ուշադիր հետևեք անձնակազմի նշաններին:

- Քաջալերեք Ձեր երեխային, որ խաղա մյուս երեխաների կամ աշխատակիցների հետ, եթե նա պատրաստ է: Եթե Ձեր երեխան դեռ պատրաստ չէ, կարելի է մի փոքր էլ սպասել:
- Երբ Ձեր երեխան խաղում է մենակ կամ մյուսների հետ, սա նշանակում է, որ նա պատրաստ է իր առաջին բաժանմանը: Փորձեք մեկ քայլ ետ անել և դիտել:
- Եթե Ձեր երեխան անմիջապես հետևի Ձեզ և զգա Ձեր կարիքը իր կողքին, դա կնշանակի, որ նա դեռ պատրաստ չէ:
- Լիակատար բաժանումը ավելի երկար է տևում տրավմա ունեցող կամ բռնության զոհ եղած երեխաների մոտ:

Նախնական բաժանումներ

Երբ Դուք և անձնակազմը զգաք, որ Ձեր երեխան հանգիստ խաղում է և իրեն լավ է զգում, դուք կարող եք կարճ ժամանակով դուրս գալ սենյակից:

- Ասեք Ձեր երեխային, որ գնում եք զուգարան և երկու րոպեից ետ կգաք:
- Երբեք դուրս չգաք սենյակից առանց անձնակազմին տեղյակ պահելու:
- Գնացեք զուգարան և վերադարձեք ճիշտ Ձեր ասած ժամին:
- Եթե առաջին բաժանումը տրավմատիկ լինի Ձեր երեխայի համար, դա կնշանակի, որ նա դեռ պատրաստ չէ:

Եթե առաջին բաժանումը նորմալ անցնի, ուրեմն կարող եք փորձել երկրորդ անգամ ավելի երկար բացակայել՝ 5-15 րոպե: Այնուհետև երրորդ անգամ ավելի երկար՝ 10-20 րոպե:

Այս փոքրիկ բացակայությունները Ձեր երեխային վստահություն են ներշնչում և նա գիտակցում է, որ Դուք միշտ ետ եք գալու: Ցանկացած բաժանման դեպքում՝

- Եղեք հետևողական:
- Ասեք Ձեր երեխային, որ դուրս եք գալիս: Առանց ասելու դուրս գալը անվստահություն է առաջացնում և կոժվարացնի հետագա բաժանումները:
- Փորձեք հնարավորինս կարճ հրաժեշտ տալ և դուրս գալուց երեխային թողնել նույն/ ծանոթ աշխատակցի հետ:
- Ետ վերադառնալուց կենտրոնացեք դրական բաների վրա: Հարցրեք երեխային, թե որ խաղալիքով է նա խաղացել կամ որն է նրան ամենաշատ դուր եկել:

Երբ երեխան սկսի առանց զգալի դժվարության բաժանվել Ձեզնից կարճ ժամանակով, ուրեմն նա պատրաստ է մնալ առանց Ձեզ: Երբ սկսեք երեխային մենակ թողնել լրիվ օրով, փորձեք առաջիններից մեկը գալ իրեն վերցնել, որպեսզի նա վստահ լինի, որ Դուք միշտ ետ եք գալու:

Ի՞նչ անել, եթե իմ երեխան տխուր է

Եթե Ձեր երեխան տխուր է, փորձեք չանհանգստանալ: Ձեզ պետք է ավելի շատ ժամանակ անցկացնել երեխայի հետ, որպեսզի նա իրեն ապահով և հանգիստ զգա ծրագրին մասնակցելու համար: Կարող եք Ձեզ հետ բերել ծածկոց կամ խաղալիք, կամ թողնել Ձեր շարժը կամ հագուստը, որպեսզի երեխան իրեն ավելի հանգիստ զգա:

Ծրագրի անձնակազմը օգնել է բազմաթիվ ընտանիքների հաղթահարել այս դժվարությունները և պատրաստ է սատարել և ուղղություն տալ Ձեզ



Սատարում ենք երիտասարդ ներգաղթյալների երեխաների խնամքին և ադապտացիային

Հավելյալ տեղեկությունների համար ծնողները կարող են այցելել կայքը: www.cmascanada.ca



Care for Newcomer Children